| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | *53317310 ՀՀ դրամ (100%)*<br>*Նախագծման արժեքը, ներառյալ փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը-490000 ՀՀ դրամ*<br>*Տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը-833130ՀՀ դրամ*<br>*Հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը-249940 ՀՀ դրամ* |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *30390867 ՀՀ դրամ (57%)* |
| **Այլ ներդրողներ** | *..........ՀՀ դրամ ( %), նշել ներդրողի անունը:* |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը01/05/2021թ.* *Տևողությունը՝ 6 ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | |
| **Ամսաթիվ** | "__08__"_փետրվարի _2021թ. |

**էլ. Փոստ dilijan1@yahoo.com**

**Դիլիջան համայնքի ղեկավար** Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 21-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15/3 ՀԱՍՑԵԻ 93.4ՔՄ ԵՎ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15/4 ՀԱՍՑԵԻ 151.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Հայկարամ Արմենի Մովսիսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 15 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող կիսակառույց բնակելի տան /ավարտվածության աստիճանը անավարտ/ սպասարկման 677.6քմ հողամասին կից գտնվող Մոլդովական փողոցի թիվ 15/3 հասցեի 93.4քմ մակերեսով և Մոլդովական փողոցի թիվ 15/4 հասցեի 151.8քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 93.4քմ և 151.8քմ մակերեսներով հողամասերը չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չեն գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 15/3 հասցեի 93.4քմ հողամասը և Մոլդովական փողոցի թիվ 15/4 հասցեի 151.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 638389 /վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր ութսունինը/ դրամ և 1037553 /մեկ միլիոն երեսունյոթ հազար հինգ հարյուր հիսուներեք/ դրամ արժեքներով օտարել քաղ. Հայկարամ Մովսիսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 15/3 հասցեի 93.4քմ հողամասը և Մոլդովական փողոցի թիվ 15/4 հասցեի 151.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 638389 /վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր ութսունինը/ դրամ և 1037553 /մեկ միլիոն երեսունյոթ հազար հինգ հարյուր հիսուներեք/ դրամ արժեքներով քաղ. Հայկարամ Մովսիսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 22-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Քաղ. Սվետլանա Ասլանյանը՝ հայտնելով, որ հողի հարկի մայր գումարը՝ 279078 դրամ և գույքահարկի մայր գումարը՝ 71200 դրամը վճարել է ամբողջությամբ: Խնդրել է գույքահարկի և հողի հարկի տույժի արտոնություն սահմանել:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 903-Ն որոշումը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

Քաղ. Սվետլանա Ասլանյանի համար սահմանել գույքահարկի և հողի հարկի տույժի արտոնություն և ազատել գույքահարկի և հողի հարկի տույժերից՝

- գույքահարկի տույժ - 70886 դրամ
- հողի հարկի տույժ - 135254 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 23-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԱՐԾԻՆ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 9-ՐԴ ՓԿՂ. ԹԻՎ 18/1 ՀԱՍՑԵԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 416.47ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2020թ. դեկտեմբերի 14-ի թիվ 590-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի 9-րդ փկղ. թիվ 18/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողում քաղ. Արարատ Անուշավանի Թամրազյանի կողմից ինքնակամ կառուցված գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունների, մասնավորապես՝ 122.31քմ արտաքին մակերեսով անասնաշենքի, 104.11քմ արտաքին մակերեսով ծածկի և 139.29քմ արտաքին մակերեսով պահեստի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել են /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 01022021-11-0027/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արարատ Թամրազյանին՝ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի 9-րդ փկղ. թիվ 18/1 հասցեի ինքնակամ կառուցված 365.71քմ ընդհանուր արտաքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունները /122.31քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 104.11քմ արտաքին մակերեսով ծածկը, 139.29քմ արտաքին մակերեսով պահեստը/ և վերջիններիս զբաղեցրած 416.47քմ հողամասը, համապատասխանաբար, 629021 դրամ և 131938 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարը նշված գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունները և վերջիններիս զբաղեցրած 416.47քմ հողամասը քաղ. Արարատ Անուշավանի Թամրազյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի 9-րդ փկղ. թիվ 18/1 հասցեի 365.71քմ ընդհանուր արտաքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունները /122.31քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 104.11քմ արտաքին մակերեսով ծածկը, 139.29քմ արտաքին մակերեսով պահեստը/ և վերջիններիս զբաղեցրած 416.47քմ հողամասը, համապատասխանաբար, 629021 դրամ և 131938 դրամ արժեքներով քաղ. Արարատ Անուշավանի Թամրազյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 24-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջանի համայնքապետարանի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ գույքը ընդգրկել համայնքապետարանի գույքացանկում՝ համապատասխան քանակով և արժեքով.

| Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| Համակարգիչ Core i3 9100/ram 4 gb /SSD-240 gb / keyboard/mouse | հատ | 3 | 195000 | 585000 |
| Բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ Canon i-Sensys MF113w | հատ | 1 | 140000 | 140000 |
| Լազերային տպիչ Canon LBP2900 | հատ | 1 | 107000 | 107000 |

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 25-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները , ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ստեղծել Դիլիջան համայնքի հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Մարտիրոսյան Արա -համայնքի ղեկավարի տեղակալ-հանձնաժողովի նախագահ,
2. Բաղմանյան Գառնիկ-համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ-արձանագրող,
3. Աղաջանյան Արմինե-համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի տեղակալ-հանձնաժողովի անդամ,
4. Սանթրոսյան Լիպարիտ- համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ-աճուրդավար,
5. Բաբինյան Էդվարդ-համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ-հանձնաժողովի անդամ,
6. Մնացականյան Վարդան Է. -համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ,
7. Մելիքյան Սուրեն-համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**


Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 26-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքին վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ծրագրով գումար է հատկացվել Դիլիջանի ավագ դպրոցին կից ապաստարանի վերանորոգման և տարածքի բարեկարգման համար:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2200000 (երկու միլիոն երկու հարյուր հազար ) ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի 2021թ. բյուջեի եկամուտները / Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) / ավելացնել 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

2.Դիլիջան համայնքի 2021թ. բյուջեով նախատեսված ծախսերը «10-07-01 Սոցիալական հատուկ արտոնություններ» ավելացնել 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, որից հոդված 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ)-1680000(մեկ միլիոն վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ. 4264(Տրանսպորտային նյութեր)- 66000 (վաթսունվեց հազար դրամ)ՀՀ դրամ, 4269(Հատուկ նպատակային այլ նյութեր)-254000(երկու հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 27-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԱՐԾԻՆ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/3 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 622-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի թիվ 53/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողում քաղ. Ալիկ Գագիկի Աղաջանյանի կողմից ինքնակամ կառուցված հասարակական կառուցապատման նշանակության շինության՝49.09 քմ արտաքին մակերեսով, նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 04022021-11-0021/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Ալիկ Աղաջանյանին՝ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի թիվ 53/3 հասցեի ինքնակամ կառուցված հասարակական կառուցապատման նշանակության շինությունը՝ 49.09 քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.0քմ հողամասը, համապատասխանաբար, 379956,6 դրամ և 57760 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարը նշված հասարակական կառուցապատման նշանակության շինությունը և վերջինիս զբաղեցրած 20.0քմ հողամասը քաղ. Ալիկ Աղաջանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի 1-ին փողոցի թիվ 53/3 հասցեի հասարակական նշանակության շինությունը՝ 49.09քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.0քմ հողամասը, համապատասխանաբար, 379956,6 դրամ և 57760 դրամ արժեքներով քաղ. Ալիկ Աղաջանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 28-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 2642.2ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ, 47.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2642.2քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը մրցույթի, 47.7քմ մակերեսով հողամասը կրկնամրցույթի միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2642.2քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը մրցույթի, 47.7քմ մակերեսով հողամասը կրկնամրցույթի միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Առդիր և.

Դիլիջանի համայնքի ավագանու

2021թ. փետրվարի 19-ի թիվ 28-Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ՔԿ-21/ | ք.Դիլիջան, Պարզ լճի 7/9 | 11-003-0675-0070 | 1,486 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 104,020 |
| 2 | Լոտ 2/ՔԿ-21/ | ք.Դիլիջան, Գետափնյա 2/27 | 11-003-0134-0241 | 68.15 | Բնակավայրերի հող | ընդհանուր օգտագործման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 29,986 |
| 3 | Լոտ 3/ՔԿ-21/ | գ.Հաղարծին, 13-րդ փ. 2-րդ փկղ. 1/1 | 11-042-0006-0089 | 179 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 17,900 |
| 4 | Լոտ 4/ՔԿ-21/ | գ.Հաղարծին, 1-ին փ. 108/1 | 11-042-0087-0111 | 909 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 45,450 |
| 5 | Լոտ 9/ՔԿ-19/ կրկնամրցույթ | ք.Դիլիջան, Մյասնիկյան 28/9 | 11-003-0310-0123 | 47.8 | Բնակավայրերի հող | ընդհանուր օգտագործման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 21,510 |

*Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ* *Ս.Եգանյան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 29-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 52865.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 12 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 6322.8ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 13 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 746.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտնտեսական նշանակության հողերից 52865.9քմ ընդհանուր մակերեսով թվով 12 հողամասերը, Բնակավայրերի հողերից 6322.8քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի և 746.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտնտեսական նշանակության հողերից 52865.9քմ ընդհանուր մակերեսով թվով 12 հողամասերը, Բնակավայրերի հողերից 6322.8քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի և 746.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

Առյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու
2021թ.փետրվար 19-ի թիվ --29---Ա որոշման

## Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ԳՀ-21/ | ք.Դիլիջան | 11-003-0409-0001 | 894.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 447,000 | չկան |
| 2 | Լոտ 2/ԳՀ-21/ | ք.Դիլիջան | 11-003-0614-0033 | 2,000.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 400,000 | չկան |
| 3 | Լոտ 3/ԳՀ-21/ | ք.Դիլիջան | 11-003-0707-0004 | 2,015.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 806,000 | չկան |
| 4 | Լոտ 4/ԳՀ-21/ | ք.Դիլիջան | 11-003-0296-0005 | 2,151.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 860,400 | չկան |
| 5 | Լոտ 5/ԳՀ-21/ | գ.Հաղարծին | 11-042-0145-0025 | 6,000.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 600,000 | չկան |
| 6 | Լոտ 6/ԳՀ-21/ | գ.Թեղուտ | 11-029-0027-0004 | 1,069.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 106,900 | չկան |
| 7 | Լոտ 7/ԳՀ-21/ | գ.Աղավնավանք | 11-007-0101-0029 | 20,000.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 1,000,000 | չկան |
| 8 | Լոտ 8/ԳՀ-21/ | գ.Աղավնավանք | 11-007-0111-0007 | 10,942.8 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 547,140 | չկան |
| 9 | | | 11-007-0111-0010 | 2,656.9 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 132,845 | չկան |
| 10 | | | 11-007-0101-0030 | 2,015.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 100,750 | չկան |
| 11 | | | 11-007-0111-0012 | 1,000.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 50,000 | չկան |
| 12 | | | 11-007-0101-0031 | 2,122.2 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 106,110 | չկան |
| 13 | Լոտ 1/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Արցախի փ. 1-ին նրբ. 24/2 | 11-003-0087-0127 | 357.7 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 2,503,900 | չկան |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Լոտ 2/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Թբիլիսյան խճ. 11/1 | 11-003-0045-0056 | 245.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 1,715,000 | չկան |
| 15 | Լոտ 3/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Մ. Գորկու փ. 27/6 | 11-003-0125-0051 | 722.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 5,054,000 | չկան |
| 16 | Լոտ 4/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Տ. Պետրոսյան փ. 1-ին նրբ. 35/2 | 11-003-0040-0338 | 225.5 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,575,000 | չկան |
| 17 | Լոտ 5/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Թբիլիսյան խճ. 57/5 | 11-003-0045-0057 | 728.2 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 5,097,400 | չկան |
| 18 | Լոտ 6/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Խորհուրդների փ. 1-ին նրբ. 9/1 | 11-003-0310-0129 | 185.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,295,000 | չկան |
| 19 | Լոտ 7/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Կալինինի փ. 3-րդ նրբ. 16/8 | 11-003-0079-0009 | 95.5 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,012,300 | չկան |
| 20 | Լոտ 8/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Մոլդովական 12/23 | 11-003-0654-0042 | 309.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 2,163,000 | չկան |
| 21 | Լոտ 9/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Թբիլիսյան խճ. 32/9 | 11-003-0411-0052 | 557.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 3,899,000 | չկան |
| 22 | Լոտ 10/ՔՀ-21/ | ք.Դիլիջան, Օրջոնիկիձե փ. 4-րդ նրբ. 2/3 | 11-003-0276-0025 | 687.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 4,809,000 | չկան |
| 23 | Լոտ 11/ՔՀ-21/ | գ. Թեղուտ 1-ին փ. 111/1 | 11-029-0042-0007 | 840.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,033,200 | չկան |
| 24 | Լոտ 12/ՔՀ-21/ | գ. Խաչարձան 1-ին փ. 1-ին փկղ. 9/1 | 11-036-0003-0018 | 1,106.9 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 575,588 | չկան |
| 25 | Լոտ 13/ՔՀ-21/ | գ. Աղավնավանք 1-ին փ. 50 | 11-007-0016-0001 | 264.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 137,280 | չկան |
| 26 | Լոտ 36/ՔՀ-20/ կրկնաձուրդ | ք.Դիլիջան, Արցախի փ. 10 | 11-003-0614-0029 | 746.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 5,222,000 | չկան |

*Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ* *Ս. Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 30-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջան համայնքի 2021թ. բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 300000 դրամ, այդ թվում '

- ք.Դիլիջան Կամո 3նրբ. 13 հասցեի բնակիչ Հայկ Հրահատի Քեշիշյանին արցախյան պատերազմի մասնակից-վիրավոր- 100000 ՀՀ դրամ
- ք.Դիլիջան Կամարինի 77Ա տան բնակիչ Արամ Սարգիսի Խաչատրյանին արցախյան պատերազմի մասնակից-վիրավոր- 100000 ՀՀ դրամ
- Հաղարծին գյուղի 4-րդ փող 28 տան բնակչուհի Սիրուշ Արշակի Պողոսյանին 100-ամյակի կապակցությամբ հատկացնել 100000 ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 31-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՋԱՐԴՈՆԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող 22տ մետաղական կոնստրուկցիաների երկրորդական ջարդոնի աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և մեկնարկային գինը սահմանել 440000
(չորս հարյուր քառասուն հազար) դրամ՝ հաշվի առնելով «ՄԱՐ-ՄՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի մայիսի 25-ի գնահատման հաշվետվությունը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**